

ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՑԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԳ ԵՄԵՍԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լ. ԹԵԼՅԱՆ

Երևույթների և գործողությունների պատճառահետևանքային կապերն արտահայտելու համար լեզվի մեջ գոյություն ունեն բազմազան միջոցներ: Բարդ նախադասության համակարգում նշված հարաբերությունների դրսևորմանն են ծառայում մի շարք կառուցվածքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իմաստային և կիրառական առանձնահատկություններ: Այդ կառուցվածքների դիտարկումը շարահյուսական համանիշության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ լեզվական այդ տարբեր կառուցվածքների իմաստային կողմն ընդհանուր է, այսինքն՝ դրանք ներկայանում են իբրև միևնույն տրամաբանական հարաբերության լեզվակառուցվածքային տարբեր իրացումներ:

Բարդ նախադասությունների համակարգում համանիշ ընդունված է համարել ոչ միայն նյութական բովանդակության, այլև քերականական նշանակության ընդհանրությամբ բնութագրվող այն կառուցվածքները, որոնք ունեն ձևավորման առանձնահատկություններ: Նյութական կամ առարկայական բովանդակություն ասելով տվյալ դեպքում նկատի են առնվում առարկաների ու երևույթների միջև գոյություն ունեցող կապերն ու հարաբերությունները, որոնք արտացոլվում են լեզվական տարբեր կառուցվածքների մեջ՝ անկախ վերջիններիս քերականական իմաստից: Առարկայական բովանդակության ընդհանրությամբ են բնութագրվում, օրինակ, հետևյալ բարդ նախադասությունները, որոնցից առաջինն ունի պատճառի նշանակությամբ, իսկ երկրորդը՝ որոշչային նշանակությամբ երկրորդական նախադասություն.

Մնացած խաղերը նա չէր ընդունում, որովհետև դրանք խելքի հետ կապ չունեին (Պ. Զեյթունցյան, ԿԱՄ, էջ 2):

Մնացած խաղերը, որոնք խելքի հետ կապ չունեին, նա չէր ընդունում:

Այս կարգի նախադասությունները երբեք չեն կարող միավորվել համանիշական միևնույն շարքում, որովհետև իրենց դրսևորած քերականական իմաստներով որակապես տարբեր են: Մյուս կողմից էլ լեզվի մեջ գործառուում են բարդ նախադասության այնպիսի կառուցվածքներ, որոնց մեջ արտահայտված քերականական իմաստները թեև տարբեր են, սակայն տրամաբանորեն շատ սերտ են և միավորվում են տրամաբանական մեկ հարաբերությունը տարբեր կողմերից արտացոլելու յուրահատկությամբ: Այսպես, պատճառ-հետևանք տրամաբանական կախվածությունը կարող է մտային այլևայլ երանգներ ունենալ՝ նպատակի, պայմանի, զիջական, որոնք լեզվի մեջ ևս տարբերակվում են, և, բարդ նախադասությամբ արտահայտվելիս, յուրաքանչյուր դեպքում թելադրում են որոշակի կառուցվածք՝ ուրույն կապակցական միջոցներով և քերականական առանձին նշանակությամբ: Սակայն, եթե վերևում օրինակ բերվող նախադասությունների քերականական նշանակություններն իրենց բնույթով այնքան հեռու են, որ անհնար են դարձնում այդ երկու կառուցվածքների համանիշական փոխակերպումը, ապա պատճառի (բուն պատճառի), պայմանի, նպատակի նշանակություններով բնութագրվող բարդ նախադասությունները հաճախ թույլատրում են կառուցվածքային այնպիսի փոփոխություններ, որոնց հետևանքով ստացված նախադասությունները իմաստով քավական մտտ են, և թերևս հնարավոր է նրանց միջև եղած կապը համանիշական համարել:

Համեմատենք, օրինակ, հետևյալ նախադասությունները.

Իմ մտադրությունը գլուխ բերելու համար
ես ոչ ոքի հետ չխորհրդակցեցի, քանի որ
չունեի համապատասխան ընկերներ (Կ.
Մահարի, հ. 1, 6):

Եթե ունենայի համապատասխան ընկեր-
ներ, իմ մտադրությունը գլուխ բերելու հա-
մար նրանց հետ կխորհրդակցեի:

Այսպիսի փոխակերպության համար հիմք է տալիս կառուցվածքների մեջ դրսևորված քերա-
կանական նշանակությունների մերձավորությունը, և հատկապես ստորոգյալների եղանակա-
ժամանակային իմաստների փոխակերպելիությունը՝

չունեի → ունենայի

չխորհրդակցեցի → կխորհրդակցեի

Այս կարգի բարդ նախադասությունները համանիշ համարելու դեպքում մենք, ակնհայտորեն
կշեղվենք շարահյուսական համանիշների տարբերակման քերականական խիստ շափանիշներից,
սակայն, կարծում ենք, որոշ դեպքերում այսպիսի շեղումն անխուսափելի է:

Այդպիսի շեղումը հատկապես անհրաժեշտ է, երբ համանիշության տեսանկյունով համե-
մատվում են պատճառի պարագա և հետևանքի երկրորդական նախադասություններ պարունակող
ստորադասական տիպի կառուցվածքները: Սրանց տարբերությունը զուտ քերականական-
կառուցվածքային է. պատճառահետևանքային միևնույն հարաբերությունը մի դեպքում արտա-
հայտվում է այնպես, որ պատճառն արտահայտող մասը քերականորեն ստորադասվում է
հետևանքն արտահայտող մասին, իսկ մյուս դեպքում՝ ընդհակառակը: Մինչդեռ իմաստային
առումով այս կառուցվածքները գրեթե տարբերություն չունեն (Հմտ. ես դասի չեկավ, որով-
հետև հիվանդ էր և ես հիվանդ էր, ուստի դասի չեկավ): Այս նկատառումով էլ մենք բուն
պատճառի և հետևանքի նշանակություններով օժտված համանիշ բարդ կառուցվածքները միա-
վորում ենք համանիշական մեկ շարքի մեջ և այստեղ գրաղվում ենք միայն դրանց քննությանը՝
առանց խորանալու դրանց և պայմանի ու նպատակի նշանակություններով բարդ կառուցվածք-
ների փոխադարձ փոխակերպելիության օրինաչափությունների մեջ:

1. Ստորադասական շաղկապված համանիշ կառուցվածքներ: Պատճառ-հետևանք կապի
առավել բնորոշ դրսևորումը ժամանակակից հայերենում պատճառի պարագա երկրորդական
նախադասությունն օգտակար ստորադասական տիպի կառուցվածքն է: Այս կառուցվածքին
վերաբերող բարդ նախադասությունների գլխավոր մասում նկարագրվում է որևէ գործողու-
թյուն կամ իրողություն, իսկ երկրորդականում՝ այդ գործողության կամ իրողության պատճա-
ռը: Ընդ որում երկու մասերի մեջ արտահայտված գործողությունների պատճառակցական կապն
առավել հստակ է դրսևորվում որովհետև շաղկապով կապակցվող կառուցվածքի մեջ: Սա
մաքուր պատճառական շաղկապ է, որևէ այլ կիրառություն չեզրի մեջ հատուկ չէ նրան: Այս է
պատճառը, որ նրանով ձևավորված բարդ նախադասությունները պատճառային նշանակությամբ
օժտված մյուս կառուցվածքների նկատմամբ ակնհայտ գերակշռություն ունեն ինչպես գոր-
ծածություն հաճախականության, այնպես էլ ժամանակակից հայերենի գործառական տար-
բեր ոճերում տարածված լինելու տեսակետից: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս բարդ
նախադասության՝ որովհետև շաղկապով ձևավորվող կառուցվածքը համարել պատճառահետե-
վանքային հարաբերություններ դրսևորելու իմաստային հատկանիշով միավորված բարդ նա-
խադասությունների համանիշական շարքի գերիշխող անդամ: Քանի որ գերիշխող անդամը
դիտվում է իբրև իմաստային անփոփոխակ համանիշական շարքը լրացնող մյուս կառուցվածք-
ների (անդամների) համար, ուստի յուրաքանչյուր կառուցվածքի՝ հիշյալ համանիշական շար-
քում տեղ դրավելու բավարար հիմունք ենք համարել նրա և գերիշխող անդամի կառուցվածք-
ների փոխադարձ փոխակերպման հնարավորությունը: Այսպես. «Ես շատ տխրեցի դրա համար
ու դանդաղ փակեցի աչքերս» (Վ. Պետրոսյան, ԱԶՏ, 7): Նախադասությունը կմտնի պատճա-
ռահետևանքային հարաբերություններ դրսևորող բարդ նախադասությունների համանիշական
շարքն այն դեպքում, եթե հնարավոր է «Ես դանդաղ փակեցի աչքերս, որովհետև շատ տխրե-
ցի դրա համար» փոխակերպումը՝ առանց իմաստային կոդիմ շոշափելի խաթարումների: Իհար-
կե, համանիշական այսպիսի փոխակերպումները երբեմն կարող են ծնել անհարթ, խոսքի մեջ
թիչ հանդիպող կառուցվածքներ, սակայն, չնայած դրան, փոխակերպման մեթոդը մնում է
իբրև բարդ նախադասությունների համանիշության որոշման հուսալի շափանիշ: Սրա հետ կապ-

¹ Բարդ նախադասությունների համանիշական շարքերի (կամ դաշտերի) և նրանց գերիշ-
խող անդամների առանձնացման սկզբունքների մասին տե՛ս «Լրաբեր», 1980, № 10:

ված պետք է նշել նաև, որ հաճախ համանիշական փոխակերպության համար հիմք է ծառայում ոչ թե բարդ նախադասության կառուցվածքային տիպը, այլ նրա մասերի բառակազմը: Այսպես S և S (S տառով նշանակում ենք բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասություններն իբրև ստորոգական միավորներ) կառուցվածքը խոսքային մեկ իրացման դեպքում կարող է մտնել պատճառահետևանքային նշանակությամբ բարդ նախադասությունների համանիշական շարքը (օրինակ՝ «Անձրևը դադարեց և մենք ճանապարհ ընկանք»), իսկ մի այլ դեպքում՝ ոչ («Անձրևը դադարեց և սկսվեց կարկուտը»): Հաճախ էլ, և հատկապես նախադասությունների համադասական և անշաղկապ կապակցությունների դեպքում, տվյալ կառուցվածքը սինկրետիկ կերպով համատեղում է մի քանի քերականական նշանակություններ, այսինքն՝ միաժամանակ մտնում է համանիշական տարբեր շարքերի մեջ (նման դեպքերում կառուցվածքի կոնկրետ նշանակությունը կարող է պարզ դառնալ կոնտեքստից): Այսպես՝ «Դու չկայիր՝ ես հանգիստ ապրում էի» (Հ. Մաթևոսյան, Մատերը, 46), նախադասությունը 2 ձևով փոխակերպվելով՝ կարող է մտնել և՛ ժամանակային, և պատճառային նշանակություններ արտահայտող բարդ նախադասությունների համանիշական շարքերը.

1. Երբ (քանի, քանի դեռ) դու չկայիր, ես հանգիստ ապրում էի:

2. Որովհետև (քանի որ) դու չկայիր, ես հանգիստ ապրում էի:

Որովհետև շաղկապով կառուցվածքը համարելով համանիշական շարքի գերիշխող անդամ, նախ առանձնացնենք համանիշ այն կառուցվածքները, որոնք իմաստային տեսակետից ավելի սերտ են առնչվում դրան: Դրանք ամենից առաջ գերիշխող կառուցվածքի երկրորդական մասի շարադասական փոփոխություններով ստացվող կառուցվածքային տարբերակներն են².

S որովհետև S
Որովհետև S, S
Որովհետև S, օւստի S
Որովհետև S, ապա S
Որովհետև S, այդ պատճառով S
Որովհետև S, դրա համար (էլ) S

Ինչպես տեսնում ենք, երկրորդական մասի առաջադաս դիրքի դեպքում գլխավորի մեջ հանգես եկող տարբեր հարաբերյալների միջոցով ստացվել են ոճական և իմաստային նկատելի տարբերություններ ունեցող կառուցվածքային համանիշ տարբերակներ (հարաբերյալների գործածությունը այսպիսի դեպքերում կառուցվածքային արժեք չունի):

Բերենք օրինակ՝

Նրան ծուռ, խենթ էին համարում, օրովհետև Քինոն սովորական մուրացկանների պես շէր մուրում (Գ. Մահարի, 2, 32): Որովհետև Քինոն սովորական մուրացկանների պես շէր մուրում, (ուստի, ապա, այդ պատճառով, դրա համար) նրան խենթ էին համարում:

Պետք է նշել, որ գերիշխող կառուցվածքի համար ավելի կանոնական և քնորոշ է երկրորդական նախադասության ետադաս դիրքը, (S որովհետև S), որի դեպքում հարաբերյալները գլխավորի մեջ հիմնականում բացակայում են:

Իմաստային և ոճական-կիրառական տեսակետներից գերիշխող կառուցվածքին ամենից ավելի սերտ է փանի քո շաղկապով ձևավորվող կառուցվածքը: Պատմականորեն այս շաղկապն առնչվում է ժամանակի իմաստ արտահայտող փանի (փանի քո) շաղկապին, և թեև ժամանակակից գրական հայերենում գործածվում է զուտ պատճառային նշանակությամբ, համենայնդեպս սրանով արտահայտված պատճառահետևանքային կապը այնքան հստակ չէ ու անխառն, որքան օրովհետև-ով կապվող նախադասությունների դեպքում: Մեր դասականների լեզվում հանդիպում են փանի քո շաղկապի այնպիսի գործածություններ, երբ երկրորդական նախադասության մեջ դրսևորված պատճառի իմաստը զիջում է պայմանի կամ ժամանակի իմաստներին: Օրինակներ՝ Բայց ի՞նչ հարկ էր ստեղծելու յուր առաջ մի այդպիսի մթին, մռայլ կյանք, փանի քո տակավին բախտը ժպտում էր նրան (Նար-Դոս, հ. 1, 1955, էջ 356): Ես տեսնում չի, փանի քո գլուխս ծոում հմ, ավելի շատ են ծեծում, փանի քո լեզուս մունջ եմ պահում, ավելի շատ են հայհոյում (Բաֆֆի, հ. 3, 1955, էջ 26): Այս կարգի նախադասությունները, ինչ-

² Այլ կառուցվածքներ քննարկելիս շարադասական նման տարբերակները մանրամասնորեն չեն դիտարկվում, քանի որ մեր նպատակը հիմնականում համանիշ բարդ կառուցվածքների առաջացնող կապակցության եղանակների ու միջոցների քննությունն է:

և, եւս նշեցինք, խորթ են այսօրվա գրական հայերենին և այստեղ քննվող համանիշների շարքը կարող են դասվել միայն որոշակի վերապահությանը:

Փանի որ և որովհետև շաղկապներով ձևավորվող կառուցվածքների իմաստային հակադրության հիմքը համանիշական տվյալ շարքի մեջ այն է, որ առաջին դեպքում երկրորդական նախադասության մեջ առավելապես շեշտվում է գլխավորի մեջ դրսևորված գործողության կամ իրողության բուն, առարկայական պատճառը, իսկ երկրորդ դեպքում (ֆանի որ-ով կապակցվող նախադասություններում) երկրորդական նախադասությունը ստանում է գլխավորի արտահայտած գործողության պատճառային հիմնավորման նշանակություն՝ իրրև պատճառի բնդհանուր նշանակության իմաստային նրբերանգ: Հենց այս նկատառումով է, որ ֆանի որ շաղկապով կապվող երկրորդական նախադասությունները հաճախ կոչվում են հիմունքի և դիտվում են իրրև պատճառի պարագա երկրորդական նախադասությունների հատուկ ենթատեսակ: Հիմունքի իմաստային երանգը ազատ կարող է դրսևորվել նաև որովհետև շաղկապի միջոցով, իսկ սա նշանակում է, որ հիմունքի և պատճառի երկրորդական նախադասությունները կառուցվածքային տեսակետից չեն տարբերակվում: Իմաստային այդ նրբերանգն ստացվում է բարդ նախադասության մասերի բառային կոնկրետ բովանդակությունների շնորհիվ: Եթե հաշվի առնենք նաև, որ հիմունք-հետևություն (եզրահանգում) և պատճառ-հետևանք հարաբերությունները անջրպետված չեն միմյանցից և տրամաբանական առումով խստորեն չեն սահմանազատվում, ապա կարելի է արձանագրել, որ ֆանի որ շաղկապով ձևավորված գրեթե բոլոր կառուցվածքները համանիշական զույգ են կազմում որովհետև-ով կապակցվող գերիշխող անդամի հետ.

S որովհետև S
S քանի որ S

Օրինակներ՝

Դատարանը չէր կարողանում որոշում հանել, որովհետև օրենքը թույլ չէր տալիս (Պ. Զեյթունցյան, ԿԱՄ, 33):

Դատարանը չէր կարողանում որոշում հանել, ֆանի որ օրենքը թույլ չէր տալիս:

Եվ որովհետև թույլ չէր տալիս, նորից էր դատը հետաձգվում:

Եվ ֆանի որ թույլ չէր տալիս, նորից էր դատը հետաձգվում (նույն տեղում):

Իրրև այս համանիշ կառուցվածքների կիրառական-ճճական տարբերություն կարելի է նշել, որ ֆանի որ-ով կապակցված բարդ նախադասություններն ավելի հաճախական են գիտական-հրապարակախոսական ճճում:՝

Պատճառահետևանքային հարաբերությունները դրսևորող բարդ նախադասությունների համանիշական շարքում տեղ ունեն նաև որ շաղկապով կապակցվող կառուցվածքներ: Փանի որ այս շաղկապը բազմիմաստ է և ձևավորում է քերականական ամենաբազմազան նշանակություններով բնութագրվող բարդ նախադասություններ, ուստի նշված համանիշական շարքը մտնելու համար որ-ով կառուցվածքը պետք է բավարարի որոշ պահանջների: Ամենից առաջ բարդ նախադասության ամբողջ բառային նյութը պետք է արտահայտի պատճառի և հետևանքի հաջորդման տրամաբանական բովանդակությունը: Այս դեպքում կառուցվածքային տեսակետից էլ նախադասությունը ունի մի յուրահատկություն՝ որ-ով միացող երկրորդական մասը հիմնականում առաջադաս է: Ստացվում է այսպիսի զույգ.

S որովհետև S
որ S (ուրեմն) S

³ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդիլյան, Ժամանակակից Հայոց լեզու, հ. 3, 1976, էջ 724—25:

⁴ Որոշ ուսումնասիրություններում հիմունքի նախադասություններն առանձնացվում են պատճառի պարագա երկրորդական նախադասություններից և ստանում են ուրույն մեկնաբանություն: Տե՛ս, օրինակ, Բ. Վերդյան, Բարդ ստորագասական նախադասության շարահյուսություն, Ե., 1970, էջ 214—216:

⁵ Հմմտ. Գր. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 245:

Օրինակ՝ Որ ինձ հետք չես տանում՝ Ծա էլ | (Ծա էլ) չեմ ասի, որովհետև ինձ հետք
չեմ ասի (2. Մաթեոսյան, Մատեթ, էջ 337): | չես տանում:

Որ-ով կապակցված նման կարգի նախադասություններում, ինչպես երևում է նաև օրինակից, պատճառի իմաստը անխառն չէ, այն գրեթե միշտ զուգակցված է պայմանի իմաստային երանգի հետ: Այդ պատճառով էլ նշված նախադասությունները կոնտեքստից դուրս կարող են փոխակերպվել պայմանի նշանակությամբ բարդ նախադասությունների (հմմտ. Եթե ինձ հետք չես տանում, ես էլ չեմ ասի): Իմաստային այս նրբերանգը համարելով այս և մյուս համանիշ կառուցվածքների իմաստային հակադրության հիմք, նշենք նաև, որ որ-ով կառուցվածքները վերջիններիս հակադրում են նաև ոճական-կիրառական հայեցակետից՝ իրենց ընդգծված խոսակցական զուսավորմամբ:

Որ շողկապով կապակցվող բարդ նախադասությունների մի որոշակի խումբ էլ մտնում է պատճառային նշանակությամբ բարդ նախադասությունների համանիշական շարքը՝ կառուցվածքային տեսակետից զուգահեռ կազմելով այդ շարքի գերիշխող անդամի հետ.

S որովհետև S

S որ S

Այս կառուցվածքների միջև համանիշական կապն իրականանում է միայն այն դեպքերում, երբ կառուցվածքն իրացնող բարդ նախադասությունների գլխավոր մասի ստորոգյալը ներքին ապրում, հույզ, հոգեվիճակ նշանակող բառերի իմաստային դաշտին է վերաբերում (զարմանալ, ուրախանալ, տիրել, դժգոհել, վախենալ, բարկանալ, ներել, շնորհակալ լինել և այլն), ընդ որում ստորոգյալը կարող է լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ⁶: Պատճառի նշանակությամբ այսպիսի կառուցվածքի գոյությունը լավագույն հաստատումն է այն ընդհանուր դրույթի, որ բարդ նախադասության կառուցվածքային տիպը երբեմն պայմանավորված է լինում այն լրացնող բառային միջոցների կոնկրետ իմաստներով: Բերենք մի օրինակ.

Ստրաուզը ուրախացավ, որ նրա ձայնի մեջ |
վերջապես վերաբերմունք մտավ (Պ. Զեյ-
թունցյան, ԿԱՄ, էջ 8):

Ստրաուզը ուրախացավ, որովհետև նրա
ձայնի մեջ վերջապես վերաբերմունք մը-
տավ:

Այս կառուցվածքին վերաբերող, սակայն ստորոգյալի իմաստային նշված սահմանափակումից շեղվող շատ սակավաթիվ նախադասություններ ևս կարող են արտահայտել պատճառահետևանքային հարաբերություն՝ հմմտ. խոսակցական ոճում կայունացած այս կարգի նախադասություններ՝ «Տունդ քանդվի, որ իմ տունը քանդեցիր» կամ «Մի բան կա, որ կովել են» և այլն:

Քննարկվող համանիշական շարքի ինքնուրույն անդամներ պետք է համարվեն այն բարդ նախադասությունները, որոնցում որ շողկապը հարադրված է գլխավոր մասում հանդես եկող այն պատճառով. երա համար հարաբերյալների հետ: Վերջիններս անմիջապես հարելով շողկապին, նրա հետ միասին ձեռք են բերել կապակցական առանձին միավորի արժեք (այն պատճառով որ, երա համար որ): Սրանցով ձևավորվող կառուցվածքներն ըստ հարկի կարող են հանդես գալ գերիշխող կառուցվածքի փոխարեն, ընդ որում առաջինը կիրառվում է գերազանցապես հրապարակախոսական ոճում, իսկ երկրորդը առավել հատուկ է խոսակցական լեզվին.

S որովհետև S

S այն պատճառով, որ S

S նրա համար, որ S

Օրինակներ. Նկարում է այն պատճառով, որ չի կարող շնկարել |
Նկարում է, որովհետև չի կարող շնկարել (Ռ. Զարյան,
Հուշապատում, 2, էջ 18):

Իրեր իմաստային յուրահատկություն պետք է նշել, որ այն պատճառով որ կապակցու-
թյամբ միացած երկրորդական նախադասություններում դրսևորված պատճառի նյութական լի-
նելը շեշտված է այնքան, որ այսպիսի կառուցվածքը հիմունքի նշանակությամբ նախադասու-
թյուններում գրեթե չի հանդիպում: Նրա համար որ-ով կապակցվող նախադասությունները

⁶ Հմմտ. Ս. Գ. Աբրահամյան և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 725:

խոսակցական շեշտված երանգի հետ միասին պարունակում են նպատակի քերականական իմաստի նրբերանգ: Վերջինս տվյալ կառուցվածքում գերիշխող է դառնում երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի ձևերով արտահայտված ստորոգյալի առկայության դեպքում⁷: Այն պատճառով, որ, նրա համար, որ ձևերով կապակցված նախադասությունների հաճախականությունը լեզվի մեջ պայմանավորված է նաև կառուցվածքային մի առանձնահատկությամբ. սրանց գլխավոր մասերում զանազան կարգի վերաբերմունքային բառերի ներմուծմամբ հնարավորություն է ստեղծվում երկրորդական մասի մեջ դրսևորված պատճառի նշանակությունը իմաստային տարրեր երանգներ հաղորդել (ժխտված պատճառ, եզակի կամ հոգնակի պատճառ, գիշական երանգով պատճառ և այլն), մի բան, որ այլ շաղկապներով կապակցվող նախադասություններում անհնար է կամ բնական չէ: Հմմտ. Ծս եկա նաև այն պատճառով, որ ինձ կանչել էիք: (Բնական չէ՝ Ծս եկա նաև որովհետև...): Կամ՝ Արամը չպետք է գնար քեկուզ նրա համար (այն պատճառով), որ դասեր ուներ (բնական չէ՝ Արամը չպետք է գնար քեկուզ որովհետև...):

Պատճառահետևանքային հարաբերությունը դրսևորող բարդ ստորադասական կառուցվածքը երբեմն կապակցված է լինում չէ՞ որ շաղկապով: Համանիշների մեջ հետաքրքրող շարքում այս կարգի նախադասություններն առանձնանում են ոճական տեսակետից՝ առավելապես հուզական-արտահայտչական որոշակի նրբերանգներով: Իբրև այդպիսին այս կառուցվածքները գործածական են և՛ գեղարվեստական գրականության մեջ, և՛ բանավոր խոսակցական լեզվում և սակավադեպ են չեզոք պատմողական ոճի տեքստերում: Այս կառուցվածքը հուզաարտահայտչական երանգավորում է ստանում ամենից առաջ չէ՞ որ շաղկապի բառային իմաստի շնորհիվ, սակայն հաճախ դրան նպաստում է նաև մասերի ձևավորման յուրահատկությունը: Քննելով կարու ցվածքում, օրինակ, շատ բնական է գլխավոր մասի հարցական բնույթը: Փոխակերպման համանակ վերջինս պետք է փոխարինվի իր պատմողական համանիշով: Այսպիսով՝

S որովհետև S
S չէ՞ որ S

Օրինակներ.

Խղճմտանքի ընդդեմ է բամբասել նրանց այդպիսի հանցանքների համար. չէ՞ որ մենք ամենքս էլ ունենք այդպիսի թուլություններ (Բաֆֆի, հ. 2, 1955, էջ 53)

Խղճմտանքի ընդդեմ է բամբասել նրանց այդպիսի հանցանքների համար, որովհետև...

Ինչո՞ւ է զրոսաշրջիկների հետ գալիս մայրըս, չէ՞ որ մենք նրան երեք ամսով հրավեր էինք ուղարկել (Ս. Կապուտիկյան, Խճանկար... էջ 52)

Մայրս զրոսաշրջիկների հետ չպետք է գար, որովհետև...

Բայց ի՞նչ, միթե՞ ես իրավունք ունեի սպասել այդ երիտասարդից, որ նա սիրեր ինձ, չէ՞ որ նա գիտեր, որ ես հարուստ չեմ, որ ես օժիտ չունեմ... (Մուրացյան, հ. 1, 1951, էջ 170)

Ես իրավունք չունեի սպասել այդ երիտասարդից, որ նա սիրեր ինձ, որովհետև նա գիտեր...

Իմաստային յուրատեսակ նրբերանգ են պարունակում այն բարդ նախադասությունները, որոնց մասերը միավորված են մանավանդ, մանավանդ որ (հազվադեպ՝ նամանավանդ, նամանավանդ որ) շաղկապներով: Եթե պատճառական մյուս շաղկապներով կապվող կառուցվածքներում երկրորդական նախադասությամբ արտահայտվում է գլխավորի գործողության միակ կամ հիմնական պատճառը՝ առանց մյուս հնարավոր պատճառներին կարևորություն տալու, ապա քննվող կառուցվածքում, արդեն իսկ շաղկապի բառային իմաստի մեջ, ակնարկվում են այդ նույն գործողության կամ իրողության այլ պատճառներ ևս, որոնք (կամ թերևս դրանցից մեկը) սովորաբար հայտնի են կոնտեքստից:

⁷ Բարդ նախադասության իմաստային յուրահատկությունների դրսևորման մեջ մասերի եղանակաժամանակային պլանների փոխհարաբերությունը որոշակի դեր ունի, սակայն այդ երևույթի մանրամասն քննությունը դուրս է այս հոդվածի նպատակներից:

Տ որովհետև Տ
Տ մանավանդ (որ) Տ

Որինակ՝ Այդ կտավն անշնչելի տպավորություն է թողել, մանավանդ որ բնորդը ծանոթ էր ինձ (Ռ. Ջարյան, Հուշապատում, 2, էջ 47): (Այդ կտավն անշնչելի տպավորություն է թողել, որովհետև բնորդը ծանոթ էր ինձ):

Իմաստային նշված առանձնահատկությունն էլ պայմանավորում է այս կարգի կառուցվածքների տարածված լինելը հայերենի գործառական տարրեր ոճերում:

Ժամանակակից հայերենում համեմատաբար սահմանափակ կիրառություն ունեն այնքան (այնքան որ) բառով կապակցվող բարդ նախադասությունները: Քննարկվող համանիշական շարքի մյուս կառուցվածքներին սրանք հակադրվում են իմաստային այն նուրբ յուրահատկությամբ, որ սրանց գլխավոր մասում արվող դատողությունը պատճառաբանվում է երկրորդականում արտահայտված որևէ հատկանիշի շարժում ու աստիճանով: Իմաստային այս սահմանափակումը անդրադառնում է այս կառուցվածքների գործածության հաճախականության վրա, թեև ոճակիրառական առումով սրանք խիստ գծված շրջանակների մեջ չեն մտնում:

Տ որովհետև Տ
Տ այնքան (որ) Տ

Օրինակ՝ Ամբոխը երկար ժամանակ ուշքի չէր գալիս, այնքան (որ) ցնցող էր տեսարանը: (Ամբոխը երկար ժամանակ ուշքի չէր գալիս, որովհետև տեսարանը ցնցող էր):

Կիրառության նեղ ոլորտ ունի նաև պատճառական նշանակություն արտահայտող ինչ էլ թե շաղկապը: Սրանով ձևավորվող բարդ նախադասությունները համանիշական շարքում առանձնանում են ժողովրդա-խոսակցական ոճի ակնհայտ երանգով: Իմաստային տեսակետից էլ սրանք ընդգրկվում են միայն այն դեպքերը, երբ երկրորդական մասում արտահայտված պատճառը բավարար չի դիտվում գլխավոր նախադասության մեջ արվող հետևության համար:

Տ որովհետև Տ
Տ ինչ է թե Տ

Օրինակ՝ Նրան նախատեսին, ինչ է թե դասից ուշացել էր:

Հետաքրքրական է նաև երբ-ի գործածությունը պատճառական շաղկապի իմաստով: Իմաստային տեսակետից սրանով կապակցված պատճառահետևանքային կառուցվածքներն ունեն այսպիսի յուրահատկություն. երկրորդական նախադասությամբ արտահայտված պատճառը խոչընդոտում է գլխավորի մեջ նկարագրվող գործողության կատարմանը: Այս հանգամանքը սովորաբար թելադրում է նաև յուրատեսակ կառուցվածք՝ գլխավոր նախադասության գործողությունը ժխտվում է հետտրական հարցում պարունակող հարցական կառուցվածքի միջոցով, որը փոխակերպվելիս վերածվում է համանիշ ժխտական կառուցվածքի:

Տ որովհետև Տ
Տ երբ Տ

Ինչո՞ւ վերադառնանք տուն, երբ մեզ ոչ ոք չի սպասում:

Չենք վերադառնա տուն, որովհետև մեզ ոչ ոք չի սպասում:

Երբ-ով կապվող նման կառուցվածքները ևս համատեղում են պայմանի իմաստ, մի հատկանիշ, որով ընդգծվում է սրանց և համանիշական շարքի մյուս անդամների նրբիմաստային հակադրությունը: Իբրև կապակցության միջոց կարելի է ըմբռնել մեկ է (որ), միևնույն է (որ) կապակցությունները, որոնք, կառուցվածքը իրացնող որոշակի բառային կազմի առկայության դեպքում, նպաստում են պատճառահետևանքային հարաբերության դրսևորմանը: Այդպիսի կառուցվածքները հատուկ են գերազանցապես խոսակցական ոճին:

Տ որովհետև Տ
Տ մեկ է (որ) Տ
Տ միևնույն է որ Տ

Օրինակ՝ գնանք կինո, մեկ է (որ) ժամանակ ունենք: գնանք կինո, որովհետև ժամանակ ունենք:

⁸ Հմմտ. Գր. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 249:

Գեղարվեստական տեքստերում, երբեմն նաև հրապարակախոսության մեջ հանդիպում են պատճառահետևանքային բարդ նախադասություններ ձևավորող քանզի, զի շաղկապները, որոնք ժամանակակից հայերենի արդեն խորթ են և գործածվում են միայն ոճավորման նպատակներով՝

S որովհետև S
S քանզի S
S զի S

օրինակներ՝

Ծն ներում եմ քեզ, ներում էլի
Քանզի խեղճ ես դու, և ոչ թե շար (Չարենց)

Ծն վախենում եմ սեր բառը ասել, Զի նախազգում եմ, որ սիրուց անդին ամալություն է: (Ա. Կիրակոսյան)

Ինչպես արդեն նշել ենք, հետևանքի և պատճառի պարագա երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների տարբերությունը զուտ կառուցվածքային-քերականական է: Միևնույն գործողությունների և երևույթների միջև առկա պատճառ-հետևանք տրամաբանական հարաբերությունը առաջին դեպքում համապատասխանում է գլխավոր նախադասություն — երկրորդական նախադասություն, իսկ երկրորդ դեպքում՝ երկրորդական նախադասություն — գլխավոր նախադասություն քերականական հարաբերություններին: Իմաստային տեսակետից սրանց միջև սովորաբար նշվում են հաղորդման նպատակի հետ կապվող տարբերություններ: «ԾԹե առաջին դեպքում հաղորդման հիմնական նպատակը հետևանք հանդիսացող գործողությունը կամ երևույթն է, իսկ դրա առաջացման պատճառը հաղորդում է միայն այդ երևույթի, գործողության մասին պատկերացումը ավելի լրիվ դարձնելու համար, ապա երկրորդ դեպքում տեսնում ենք բոլորովին հակառակ հարաբերություն: Այստեղ հաղորդման հիմնական նպատակը պատճառ հանդիսացող երևույթը, գործողությունն է, իսկ նրանից առաջացած հետևանքը բերվում է որպես հիմնական մտքի լրացում, ստորադասվում է առաջինին»⁹: Թերևս հենց այս նրբերանգային տարբերությունն էլ պետք է համարվի այն իմաստային հիմունքը, որով նշված երկու տարբեր քերականական կառուցվածքները միավորվում են համանիշների միևնույն խմբի մեջ: Հետևանքի նշանակությամբ բարդ նախադասությունների իմաստային այդ առանձնահատկությամբ են պայմանավորված նաև նրանց կառուցվածքային հատկանիշները՝ երկրորդական մասի ետադաս դիրքը, գլխավորի մեջ հարաբերյալների բացակայությունը և այլն: Սակայն պետք է նշել նաև, որ քննվող կառուցվածքների միջև նշված իմաստային նրբերանգը երբեմն այնքան ազոտ է դրսևորվում, որ «... թվում է, թե լոկ ձևական նշանակություն է ստանում այստեղ գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերության հարցը...»¹⁰: Սա նկատելի է հատկապես այն դեպքերում, երբ պատճառի նշանակությամբ բարդ նախադասությունը կապակցված է լինում զուգադիր շաղկապներով (որովհետև—ուստի, քանզի որ—ուստի, որովհետև—հետևաբար և այլն), և նախադասության քերականական իմաստը փոխվում է այդ բաղադրյալ շաղկապների առաջին (պատճառական) եզրի բացակայությամբ միայն: Հմտ. Որովհետև շոգ էր, ուստի բազմաթիվ ճանճեր թափվել էին նրա վրա և ծծում էին մածուցը և լոռի ջուրը (ԱԲԾ, 1955, 605) — և՛ Շոգ էր, ուստի բազմաթիվ ճանճեր...: Նման դեպքերում պատճառի պարագա և հետևանքի երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների միջև նրբիմաստային տարբերություն մատնանշելը նույնքան դժվար է, ինչքան, ասենք, պատճառի իմաստ դրսևորող բարդ և պարզ կառուցվածքների միջև (օրինակ՝ նա դասի չեկավ, որովհետև հիվանդ էր — նա դասի չեկավ հիվանդության պատճառով): Իմաստային կողմի գրեթե բացարձակ նույնությամբ բնութագրվող շարահյուսական այս տարբեր կառուցվածքների գոյությունը տվյալ լեզվով հաղորդակցվողներին հնարավորություն է տալիս ընտրություն կատարել դրանց միջև՝ հաղորդման կոնկրետ իրադրությունից և նպատակներից, ինչպես նաև հաղորդողի նախասիրությունից ելնելով: Հետևանքի երկրորդական նախադասություն պարունակող բարդ կառուցվածքները, ինչպես նշել ենք, ունեն կապակցության առանձին միջոցներ և դրանցից յուրաքանչյուրը բարդ նախադասությանը հաղորդում է իմաստային կամ ոճական յուրահատուկ նրբերանգ: Հետևանքի

9 Ս. Գ. Աբրահամյան և ուրիշներ, նշվ. աշխ., հ. 3, 1976, էջ 761—762:

10 Գր. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 259:

շաղկապներից այնպես որ-ը, օրինակ, բնութագրում է գլխավորի գործողությունը՝ նրանից անմիջաբար բխող հետևանքը ներկայացնելու միջոցով, ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես շաղկապները առավելապես հիմունքի երանգ ունեն և ձևավորում են հիմնականում գիտահրապարակախոսական տեքստերում գործառող կառուցվածքներ և այլն: Ընդհանուր առմամբ քերականական այս նշանակության դրսևորման իմաստային երանգները իրենց բնույթով որակական տարբերություն չունեն պատճառական իմաստի դրսևորման վերը քննված նրբերանգներից, քանի որ այդ երկու կարգի կառուցվածքները, ի վերջո, ծառայում են տրամաբանական միևնույն հարաբերության լեզվական արտացոլմանը: Այսպիսով, քննության ենթակա համանիշական շարքը կարելի է լրացնել այսպիսի անդամներով՝

S որովհետև S
S այնպես որ S

Նա լավ է պարապում, այնպես որ քննությունը կհանձնի հաջող: (Նա քննությունը կհանձնի հաջող, որովհետև լավ է պարապում)

S որովհետև S
S ուստի (և) S

Չանգան այդպես էր տեսնում իր ապագա ներկայացումը, ուստի (և) իրենը պնդեց:
Չանգան իրենը պնդեց, որովհետև այդպես էր տեսնում իր ապագա ներկայացումը: (Ի. Զարյան, Հուշապատում, 2, էջ 41):

S որովհետև S
S ուրեմն (և) S

Դու նրա աշակերտն ես, ուրեմն պետք է հարգես նրան:
Դու պետք է հարգես նրան, որովհետև նրա աշակերտն ես:

S որովհետև S
S հետևաբար S
S հետևապես S

Աշխատանքը դժվար էր, հետևաբար (հետևապես) շատ ջանքեր էր պահանջում: Աշխատանքը շատ ջանքեր էր պահանջում, որովհետև դժվար էր:

S որովհետև S
S որից S

Այդ տարի երաշտ էր եղել, որից գետինը ճաքճքել էր:
Գետինը ճաքճքել էր, որովհետև այդ տարի երաշտ էր եղել:

S որովհետև S
S որի պատճառով S
S որի համար S

Նա սիրում էր երգել, որի պատճառով (որի համար) միշտ հրավիրվում էր խնջույքների: Նա միշտ հրավիրվում էր խնջույքների, որովհետև սիրում էր երգել:

2. Ստորագասությունների իմաստային և ոճական նրբերանգներն ստացվում էին հիմնականում նրանց գլխավոր և երկրորդական մասերը կապակցող տարբեր շաղկապների գործածության շնորհիվ: Բարդ նախադասությունների անշաղկապ կապակցության դեպքում նրանց մասերի միջև առկա իմաստային հարաբերությունը դրսևորվում է կառուցվածքային այլ հատկանիշների միջոցով՝ մասերի շարադասություն, դրանց եղանակաժամանակային պլանների ուղղակի համապատասխանություն, կառուցվածքի բառային լրացման որոշակի օրինաչափություններ: Անշաղկապ բարդ կառուցվածքը իմաստային բազմազան երանգներ դրսևորելու խիստ սահմանափակ հնարավորություններ ունի, քանի որ, ինչպես վերևում տեսանք, այդպիսի երանգները արդյունք են ամենից առաջ կապակցության միջոցի փոփոխության: Անշաղկապ կապակցության դեպքում երբեմն նույնիսկ դժվար է լինում որոշել բարդ նախադասության միջոցով դրսևորված հիմնական քերականական իմաստը, որովհետև, ինչպես վերևում էլ նշել ենք,

այդպիսի կառուցվածքը հաճախ համատեղում է քերականական մի քանի իմաստներ և կարող է փոխակերպվել շաղկապավոր տարբեր կառուցվածքների: Պատճառահետևանքային կապեր դրսևորող անշաղկապ նախադասությունների մեջ, օրինակ, կարող են միաձուլվել կերպով հանդես գալ նաև պայմանի, մեկնական, նպատակային, ժամանակային հարաբերությունների իմաստային երանգներ: Անշաղկապ կառուցվածքների մեջ հաճախ անհնար է պարզել նաև մասերի միջև գոյություն ունեցող քերականական հարաբերության բնույթը, այսինքն դրանք կարող են մեկնաբանվել և՛ համադասության, և՛ ստորադասության դիրքերից:

Պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող անշաղկապ նախադասությունների կառուցվածքային տիպը, մեր կարծիքով, հնարավորություն չի տալիս նրանցում հստակորեն տարբերակել պատճառի և հետևանքի քերականական նշանակություններով բնութագրվող կառուցվածքներ: Սա նշանակում է, որ միևնույն անշաղկապ կառուցվածքը կարող է ունենալ և՛ պատճառի, և՛ հետևանքի շաղկապներով կապակցված շաղկապավոր փոխակերպներ: Հմմտ. Ութերը ցավում են, դժվարանում է վեր կենալ (ՍԿ, ԽՃ., էջ 63)

Ութերը ցավում են, ուստի դժվարանում է վեր կենալ, որովհետև ութերը ցավում են:

Այսպիսի նախադասությունները կարող են ունենալ նաև համադասական կառուցվածքի համանիշ տարբերակներ, օրինակ՝ Ութերը ցավում են և դժվարանում է վեր կենալ: Ասվածից հետևում է, որ քննվող համանիշական շարքում տեղ գրավող անշաղկապ կառուցվածքը (Տ. Տ) կարելի է քննել նաև համադասություն-ստորադասություն քերականական հակադրությունից դուրս:

S որովհետև S
S, S

Օրինակներ՝ Ես ջահել եմ, շեմ հիշում (Ս. Խանզադյան, 5, էջ 37)

Ես շեմ հիշում, որովհետև ջահել եմ:

Հավերթ ձու ածին, ձուն վերցնող շեղավ՝ կատուն կերավ:

(Հ. Մաթևոսյան, Մառեր, էջ 338)

... Կատուն կերավ, որովհետև ձուն վերցնող շեղավ:

Նշենք նաև, որ այս եղանակով կապակցված որոշ կառուցվածքներ շունեն իրենց փոխակերպը շաղկապավոր կառուցվածքների մեջ (այսպես կոչված «բացարձակ անշաղկապ» նախադասություններ են): Այս կարգի նախադասություններում օժոգրաբար մտքերի սրամաբանական անցման մի օղակը լեզվական արտահայտություն չի ստանում, և, եթե դրանք մտնում են պատճառահետևանքային նախադասությունների համանիշական շարքը, ապա փոխակերպվելիս պետք է վերականգնեն այն: Այսպես՝

Ու մի վախ մտավ մեչս. կղիմանա՞: (Ռ. Զարյան, Հուշապատում, 2, էջ 24):

Ու մի վախ մտավ մեչս, որովհետև մտածեցի, (թե) կղիմանա՞:

Անշաղկապ նախադասություններով արտահայտվող մտային հարաբերությունների դրսևորմանը, ինչպես ասվեց, նպաստում են կառուցվածքը խոսքի մեջ իրացնող բառային միջոցները: Պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող անշաղկապ նախադասություններում էլ հաճախակի են գործածվում բառային— բառակապակցական այդպիսի միջոցներ, որոնք իրենց այդ կիրառության մեջ բավական կայունացել են և կարծես թե ստանձնել են բարդ նախադասության մասերը կապակցելու գործառություն: Պարզ է, որ նման գեպքերում ամբողջ նախադասության իմաստային և ոճական երանգավորումը պայմանավորված է հենց այդ բառային միջոցների իմաստային և կիրառական յուրահատկություններով: Թվարկենք մի քանի բնորոշ դեպքեր՝

S որովհետև S

S տեսնում ես (չե՞ս տեսնում—) S

Օր. Մի աղմկիր, տեսնում ես (չե՞ս տեսնում) քնած է:

Մի աղմկիր, որովհետև քնած է

S որովհետև S

S ինչ էլ լինի (ինչ ուզում է լինի) S

S ոնց էլ լինի S

Պու ուժեղ ես, ինչ էլ լինի (ինչ ուզում է լինի)
Նրան կհաղթես:

Պու նրան կհաղթես, որովհետև ուժեղ ես:

3. Համադասական համաեկիչ կառուցվածքներ Պատճառահետևանքային հարաբերություններ դրսևորող համադասական շաղկապավոր կառուցվածքը հիմնականում ձևավորվում է և, ու բազմիմաստ շաղկապներով: Սրանց մեջ, բնականաբար, մասերի քերականական կախվածության հարցը վերանում է, իսկ իմաստային և կառուցվածքային հատկանիշներով սրանք ստորադասական շաղկապավոր կառուցվածքներին հակադրվում են այնպես, ինչպես անշաղկապ կառուցվածքները: Սրանց համար հատկանշական է թերևս այն, որ պատճառ դրսևորող մասը նախադաս է կիրառվում:

S որովհետև S
S և (ու) S

Սր. Ինչքան գիտեր, այդ մարդիկ հիմա իր թշնամիներն էին և պետք է ամեն ինչ անեին՝ իրեն կործանելու համար: (Պ. Ջեյթ. ԿԱՄ, էջ 27)

Այդ մարդիկ պետք է ամեն ինչ անեին իրեն կործանելու համար, որովհետև, ինչքան գիտեր, հիմա իր թշնամիներն էին:

Նա ժառանգ չունեիր, և այդ փաստը նրան հուշեց մի հետաքրքիր ու յուրօրինակ միտք (Պ. Ջեյթ. ԿԱՄ, էջ 54): Ըստ երևույթի համադասական պետք է համարվեն նաև այն բարդ նախադասությունները, որոնց երկրորդ (հետևանք արտահայտող) մասը սկսվում է (և) դրա համար (էլ), (և) այդ պատճառով (էլ), (և) դրանով (էլ) կապակցություններով:

Ընդհանրացնելով կառուցվածքների նախընթաց նկարագրությունը, ներկայացնենք պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտելու իմաստային հատկանիշով միավորված համանիշ բարդ կառուցվածքների շարքը:

Կառուցվածքներ

Օրինակներ

- S որովհետև S
- S քանի որ S
- որ S, S
- S այն պատճառով որ S
- S նրա համար որ S
- S չէ՞ որ S
- S մանավանդ (որ) S
- S այնքան (որ) S
- S որ S
- S ինչ է թե S
- S երբ S
- S քանզի S
- S զի S
- S այնպես որ S
- S ուստի (և) S
- S ուրեմն (և) S
- S հետևաբար S
- S հետևապես S
- S որից S
- S որի պատճառով S

- Նա պարզևատրվեց, որովհետև լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց, քանի որ լավ էր աշխատել:
- Որ լավ էր աշխատել, պարզևատրվեց:
- Նա պարզևատրվեց այն պատճառով, որ լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց նրա համար, որ լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց, չէ՞ որ լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց, մանավանդ (որ) լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց, այնքան (որ) լավ էր աշխատել:
- Նա ուրախ է, որ պարզևատրվել է:
- Նա չպարզևատրվեց, ինչ է թե մեկ օր բացակայել էր:
- Ինչո՞ւ պարզևատրվեիր, երբ լավ չէր աշխատել:
- Նա պարզևատրվեց, քանզի լավ էր աշխատել:
- Նա պարզևատրվեց, զի լավ էր աշխատել:
- Նա լավ էր աշխատել, այնպես որ պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել, ուստի (և) պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել, ուրեմն (և) պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել, հետևաբար պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել, հետևապես պարզևատրվեց:
- Նա շատ էր աշխատել, որից հոգնել էր:
- Նա լավ էր աշխատել, որի պատճառով (էլ) պարզևատրվեց:

- S որի համար (էլ) S
- S, S
- S և S
- S (և) այդ պատճառով (էլ) S
- S (և) դրա համար (էլ) S
- S մեկ է (որ) S

- Նա լավ էր աշխատել, որի համար (էլ) պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել, պարզևատրվեց:
- (Նա պարզևատրվեց, լավ էր աշխատել):
- Նա լավ էր աշխատել և պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել (և) այդ պատճառով (էլ) պարզևատրվեց:
- Նա լավ էր աշխատել (և) դրա համար (էլ) պարզևատրվեց:
- Աշխատենք, մեկ է (որ) ժամանակ ունենք:

S տեսնում ես (չե՞ս տեսնում) S Մի խանգարիր, տեսնում ես (չե՞ս տեսնում) աշխատում է:
S ինչ էլ լինի S նա լավ է աշխատել, ինչ էլ լինի կպարգևատրեին:

Համանիշների այս շարքը, անշուշտ, սպառիչ ցուցակը չէ բոլոր այն բարդ կառուցվածքների, որոնց միջոցով կարող է դրսևորվել իրական աշխարհի երևույթների և գործողությունների միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապը: Այն ընդհանուր պատկերացում է տալիս բարդ կառուցվածքների մեջ նշված հարաբերության դրսևորման եղանակների ու միջոցների մասին: Համանիշական այս շարքի բոլոր անդամների իմաստային և կառուցվածքային առանձնատկությունների հանգամանալից քննությունը նյութ է ավելի ընդարձակ ուսումնասիրության:

Л. Г. ТЕЛЯН—Синонимика сложных предложений, выражающих причинно-следственные отношения в современном армянском языке.—В синонимическую группу сложных предложений, выражающих причинно-следственные отношения, входят сложные предложения с придаточными причины и следствия. Доминантой синонимической группы является сложноподчиненная структура с союзом *потому что* (*որովհետև*). Рассматриваются смысловые оттенки и функционально-стилистические особенности всех структур сложных предложений (сложноподчиненных и сложносочиненных), составляющих данную синонимическую группу.